# ՄՈՒՇՈՒՐԲԱ

Մուշուրբա պատրաստող գյումրեցի վարպետ Մկրտիչն իր արհեստը ժառանգել է իր հորից, որն էլ իր հերթին իր հորից և այսպես արդեն տասնյակ տարիներ:

Ուստա Մկրտիչն իրենց "պապական" արհեստը սովորեցրել է իր երկու որդիներին Արմենին և Հովհաննեսին:

2009 թվականի ընթացքում հայրը և իր երկու որդիները պատրաստել են n հատ մուշուրբա: Ընդ որում ուստա Մկրտիչը պատրաստել է երկու անգամ ավելի շատ մուշուրբա քան պատրաստել են իր երկու որդիները միասին, իսկ Արմենը ու Հովհաննեսը՝ նույն քանակի:

Ձեր խնդիրն է, իմանալ, թե քանի մուշուրբա են պատրաստել ուստա Մկրտիչը և իր որդիները առանձին-առանձին:

**Մուտքային տվյալներ**

Մուտքում գրված է տարվա ընթացքում պատրաստված մուշուրբաների թիվը n-ը ($6 \le n \le 2^{32}-1$):

**Ելքային տվյալներ**

Պետք է արտածել կրտսեր որդու Արմենի, ուստա Մկրտիչի և Հովհաննեսի պատրաստած մուշուրբաների քանակը:

**Օրինակներ**

| № | stdin | stdout |
|---|---|---|
| 1 | 6 | 1 4 1 |
| 2 | 18 | 3 12 3 |